

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԷԼԳՐՐՕՆԻ ՄԱՅՐԱՆ ՄԱՍԻՆ

Թեմական Խորհուրդի թելադրութեան համաձայն Գր. Լրտ Շահապեանի հետ միասին ժողով մը ունեցանք Բենիամին Նուրիկեանի բնակարանը յուլիս 23ի գիշերը ուր ներկայ էին.

- Տէր եւ Տիկ. Բ. Նուրիկեան,
- Գր. Ժորժ Գազանձեան (Նախկին ասենապետ)
- Գր. Նալպանտեան,
- Տէր եւ Տիկ. Հէրրի Նարկիզ
- Տիկ. Արաքսի Կէօթաբլի
- Տիկ. Վիրճիսիա Գազանձեան

Ժողովի ընթացքին երկու գլխաւոր հարցեր շօշափուեցան: Նախ բնեցինք Էլպրոնի մատուրը ծախելու եւ Էզպրի փարքի շրջանին մէջ նոր տեղ մը գնելու գաղափարը: Մատրան տեղի մասին դժգոհութիւնը այն էր որ մէկդի է եւ Կանաչի փոխադրութեան միջոցներ չկա՞նք ինչ որ երթալու համար, եւ անոնք որոնք ինքնաշարժ չունին միշտ կը ստառապին: Իրենցմէ ոմանք արդէն այնքան ալ համախա չէին մատրան տեղը ծախելու անոր համար որ տեղւոյն ժողովուրդը պիտի չկրնայ պէտք եղած գումարները տրամադրել ուրիշ տեղ մը գնելու համար: Մանաւանդ երբ իրենց նշուեցաւ որ կրնայ ըլլալ որ Առաջնորդարանը հակառակ կենայ մատրան տեղը ծախելու, եւ այդ պարագային պիտի ստիպուին նոր տեղի մը գումարը տարողութեամբ վճարելու հարկադրանքին տակ մնալ, մեծաւ մասամբ համաձայն եղան որ ներկայ կալուածը պահուի քայքայ Բարշ. Լեւոն Սարկաւազը գործէն հանուի:

- Պահ մըն ալ մտիկ ըրինք Լեւոն Սրկ-ի մասին եղած դժգոհութիւններուն:
- 1.- Լեւոն Սրկ. ինքնագլուխ է եւ ոչ որի մտիկ կընէ:
  - 2.- Տանձնախումբի անդամներ կամ ասենապետներ միշտ զգուած՝ հրաժարած են կամ երկրորդ տարին գործի վրայ չեն մնացած: 1960էն ի վեր 5 ասենապետներ փոխուած են: 1964ին յանձնախումբի կամ ինսամակալութեան ամբողջ կազմը հրաժարած են
  - 3.- Ելեւմուտքի հաշիւները շիտակ չեն պահուած: Բումստի տեղերէ կը լսուի որ այսինչը դրամ տուած է եկեղեցիին համար եւ երբեք հարցնեն այն աստե՛ն Սարկաւազին միտքը կ'իյնայ որ այսինչը նուէր տուած էր եկեղեցիին: Ժամանակին մէկը 500 տուար տուեր է մկրտութեան աւագանին համար, առանց ինսամակալութեան հարցնելու գործի սկսած է եւ երբ հաշիւ պահանջած են, մերժած է ալ, ի վերջոյ դատարան գացած է այս հարցը, Հայր Վաչէ եւ ուրիշներ միջամտած են եւ հարցը դատարանէն դուրս վերջացած է:
  - 4.- Շատ մը առիթներու ինքզինք որպէս բահանայ ներկայացուցած է: Բաղում ըրած է, հաղորդութիւն տուած է:
  - 5.- Էլպրոնի շէնքը իր ուզածին պէս կը գործածէ:

Ներկաներուն ընդհանուր կարծիքը այն էր որ տեղւոյն ժողովուրդը եկեղեցի չերթար որովհետեւ Լեւոն Սարկաւազին չեն սիրեր: Հոս պէտք է ըսել որ Յուլիս 23ին, պատարագի աստե՛ն, տեղւոյն ժողովուրդէն ոչ որ չկար եկեղեցի: Միայն գանձապար որ տեղացի էր, եկեր է, քայքայ քանց շտեպայ: Իրկու տիկիներ ալ խոհանոց կ'աշխատին եղեր: Տինանց միութիւնկազմուէր է եւ շատ մը տիկիներ լուր իսկ չունին:

Փափաք յայտնուեցաւ որ Առաջնորդ սրբազանը իր խոստումին համաձայն պէտք է որ նոր յանձնախումբ մը կազմէ տեղացի ժողովուրդէն, որպէսզի անոնք նային թէ ինչ կարելի է ընել կանոնաւոր ծուխ մը ստեղծելու համար: Մինչ այդ Լեւոն Սարկաւազ պէտք է գործէ դադրի եւ այն տեղէն հեռանայ, այն աստե՛ն ամէն ինչ կարգի կը մտնէ:

Քանի մը առիթներու Լեւոն Սարկաւազին ՚ես ալ խօսելու առիթը ունեցայ որու ըսածներուն մէջ ՚ակասութիւն գտայ. երբ ՚արցուցի թէ ինչու տեղացի ժողով վուրդը եկեղեցի չի գար, ըսաւ որ եկեղեցատէր չեն, ՚ոգ չեն ըներ: Երբ իրեն նշեցի որ տեղացի ժողովուրդը դժգոյ է իրմէ, շեշտեց որ բոլորն ալ զինք կը սիրեն, բացի քանի մը ՚ոգիներէն որոնք կը նախանձին իր վրայ, իր ըրած եւ յաշոդդուցած գործերուն վրայ: Գծախառքար առիթ չեղաւ տեսակցելու նոր ինամակալութեան զանազան անդամներուն ՚ես շօշափելու ՚ամար նաեւ անոնց կարծիքը: Միայն Գր. Գեարոս Գաբիկեան նշեց թէ ամսոյս 22ի ժողովին Լեւոն Սարկաւազ եւս պէտք էր որ ներկայ ըլլար:

Լեւոն Սարկաւազ կը խորհի որ ՚իմա ամէն ինչ կարգին է եւ աւելի լաւ քան անցեալը երբ մասնաւոր ինամակալութիւն մը կար: Հաշիւներու տեսրակը ուզեցի իրմէ, ինձի տրատու անդամներու տեսրակը տուած էր որմէ կ'երեւի թէ 1968-64 ի շրջանին աւելի կանոնաւոր տուրքեր ՚աւարուած են քան անկէ վերջ:

Ենցեալի մէջ քանի մը անգամ քննութիւններ եղած են Վաչէ ՚այրսուրբի եւ նախկին փոխանորդ Եղիշէ Կող. Կիզիրեանի կողմէ, եւ դժգոյութիւնները միշտ նոյնը կը թուին ըլլալ:

Տպաւորութիւնս այն եղաւ որ Հոգեւոր մատակարարին եւ զոնէ դասակարգ մը մարդոց միջեւ ՚ակառակութիւնը այնքան խորացած է որ կարելի պիտի չըլլայ զիրենք իրարու ըրը բերել գործակցելու ՚ամար: Հաւանաբար Եզգարի ֆարքի ժողովուրդի շատերուն ՚ամար տարբերութիւն չըներ թէ ով է մատուրին պետք քանի որ ան՚ոգներ են, բայց եթէ նախանձախնդիրներ մը կան, զանոնք պէտք է ի մտի ունենալ, եւ թերեւս այդ նախանձախնդիրներն ալ Լեւոն Սարկաւազին ՚ակառակորդներն են:

Քէեւ Լեւոն Սարկաւազ կայտառ է միշտ եւ միշտ տրամադիր գործելու եւ պայքարելու եւ չարաչար ալ կ'աշխատի, ինձի կը թուի թէ իր տարիքի բերումով (81) երբեմն քաներ կը մոռնայ եւ կամ ալ չափազան Վստահելով իր ճարտիկութեան եւ կարողութեան վրայ, կ'ընէ ինչ որ ուզէ եւ կը ջանայ դարձուածքներ ստեղծել ամէն ինչ ի նպաստ իրեն դարձնելու ՚ամար, եւ երբեմն ալ չի յաշոդիր: Տարիքոք ծուռ ծառը կարելի չէ ուղղել: Լեւոն Սարկաւազի սիրտը շիտակ տեղն է բայց միջոցը չունի եւ չի կրնար ալ շիտակ ձեւը ստրվիլ: Անցեալի մէջ ամէն տեսակ թելադրութիւն եղած է Լեւոն Սարկաւազին որ վարչական գործերու չխառնուի, եւ ինք ալ խոստացած է, բայց այնպէս կ'երեւի թէ, ին զիտցածէն ետ չէ կեցած:

Հետեւաբար եթէ կուզենք որ Եզգարի ֆարքի այդ ՚ակառակ տարրը, որ կրնայ ամէն տեսակ վարչութեան ՚ակառակ կենալ թերեւս, եկեղեցւոյ շրջանակին մէջ բերելու փորձ ընել եւ եթէ Առաջնորդարանիս նպատակն է տեղւոյն ժողովուրդի ՚ամար եւ ոչ թէ օգափոխութեան զացողներուն ՚ամար Եւարոսի մատուրը պահել պէտք է որ

1.- Կամ Սեպտեմբերին մէջ ընդհանուր ժողով մը գումարել եկեղեցականի մը ներկայութեան եւ ՚ոն պաշտօնապէս իւրաքանչիւր ան՚ատի կարծիքը շօշափել Լեւոն Սարկաւազի մասին եւ ըստ այնմ որոշուս առլ անոր ՚ոն պաշտօնավարելու կապակցութեամբ: Եթէ գործէ իսկ ՚անուի պէտք է որ ՚ոն զոնէ քնակի եւ թերեւս եկեղեցիի մէջ սպասարկէ: (Աւելորդ չըլլար ՚ոս նշել թէ Լեւոն Սրկ. Կրսէ թէ եթէ ժողովուրդը զինք չուզեր ինք պատրաստ է գործէ դադրելու. Միայն կը զարմանամ թէ ինչու այդքան մեծ փափաք ունի անպայման գործի զուրի կենալու ՚ակառակ իր տարիքի յառաջացման:)

Այդ ժողովին յստակօրէն ժողովուրդին պէտք է նշել թէ որոշ տուրք մը պէտք է մժարեն, բայց ոչ թէ 5 տուար ինչպէս ՚իմա կընեն, այլ 13 տուար ինչպէս միւս եկեղեցիները կընեն: Նոյն օրը պէտք է նոր վարչութիւն մը կազմել տեղական մարդոցմով միայն: Այս մարմինը պէտք է գործը ձեռք առնէ Լեւոն Սրկ. ՚ոն ըլլայ կամ ոչ:

2.- Կամ ալ պէտք է եկեղեցական մը նշանակել որպէս այցելու կամ առձամեայ ՚ոսիւ որ զոնէ ամիսը անգամ մը ՚ոն երթայ, Ս. Գատարագ մատուցանէ եւ

պատասխանատու ըլլայ ամէն ինչի եւ Լեւոն Սրկ. Միայն ինքն քնակի եի եկեղեցին  
մէջ ծառայէ երբ եկեղեցական արարողութիւն կայ: -բնիկ Սոյն եկեղեցականը  
պէտք է ժողովի կանչէ տեղւոյն ժողովուրդը եւ անդամներու ցանկ մը շինել  
վերջ ընտրութիւն պէտք է ընէ նոր վարչութեան մը գործերը յառաջ տանելու  
համար: Եկեղեցականը պէտք է վճարուի իր ծառայութեան համար եւ տեղւոյն  
ժողովուրդը պէտք է պատասխանատու զգայ իր պարտականութիւնը կատարելու ոչ  
միայն եկեղեցականին հանդէպ այլ նաեւ Առաջնորդարանին հանդէպ:

Ինչպէս կ'երեւի վերոյիշեալ թելադրութիւններէն, երկու պարագաներուն ալ  
տեղացիներէ կազմուած վարչութեան մը գոյութիւնը կարելոր է տեղւոյն ժողո-  
վուրդը շարժման մէջ եւ պատասխանատուութեան ներքեւ դնելու համար:

Մինչ այդ պէտք է որ կրկին ժողով մը գումարել այս անգամ ներկայ ինամակալ-  
ներուն եւ տեղացի քանի մը անձերու հետ միասնաբար: Այնպիսի անձեր որոնք  
որպէս թէ հրապէս մտահոգ են Էզպրի փարքի շրջանի հայութեամբ: Այս հաւա-  
քոյթին նպատակը պիտի ըլլայ քննարկել թէ ինչն է լաւագոյն ձեւը ժողովուրդը  
ի մի հաւարելու յաջորդ աշնան եւ իրենց առջեւ խնդիրները պարզօրէն դնելու:

Պէտք է աւելցնեն նաեւ որ սուլիք Էին 9 ինամակալներէն միայն երկուքը  
եկեղեցի եկած էին: Իսկ 11 դպրոց դասի 11 անդամներէն միայն 5 ինքն էին իսկ  
մասրան մէջ ալ կար մօտ 20 հոգի: Տրուած տեղեկութեանց համաձայն 100 ընտանիք  
կ'ապրին այդ շրջանին մէջ եւ սակայն տոնուիլ եւ ոչ մին եկեղեցի եկած էր:  
Ասիկա քնական կացութիւն մը չի թուիր ըլլալ եւ պէտք է որ դարձանի մը մասին  
խորհիլ: Թելադրութիւնները տրդէն վերջ նշուած են:

Յուլիս 25, 1967  
Նիւ Եորք

Վազգէն Ծ. Վրդ. Գրպրդսլեան  
Առաջնորդի Փոխանորդ

Մատուցիս Խնամակալութիւնը ուղարկութեամբ կը ծանուցանէ որ յառաջիկայ  
Ապրիլ 21 ին կիւրակի օր Առաջ փոխանորդ Գերաշնորհ Տէր Վազգէն Եպիս-  
կոպոս ԳՐՊՐԸՍԼԵԱՆ բարեհաճութիւնը ունեցած է Սբ. Պատարագ մատուցանել  
առաւօտեան ժամը 11 ին :

Սրբազան հօր ամենամեծ փափաքն է կազմակերպել գաղութս՝ վերածելով  
զայն գործունեայ համայնքի մը, այդ իրականացնելու համար՝ իր անկեղծ  
փափաքը միայն չխաբար, այդ նուիրական գործը յաջողցնելու համար մեր  
բոլորին պարտականութիւննն է կանգնիլ անոր կողքին՝ եւ անձնուիրաբար  
գործակցիլ անոր հետ եւ այն ատեն իրապէս պիտի ունենանք առողջ եւ գոր-  
ծունեայ կազմակերպուած համայնք մը :

Կրկնակ պարտականութիւն է նաեւ մեր բոլորին նեկայութիւնը այդ ապրիլ  
21 ի օրը որ պիտի կատարուի Հոգեհանգիստ մեր միլիօնաւոր նահատակներու  
յիշատակին, այս առթիւ մեր բարեխնամ Առաջնորդ Սրբազան հայրը ապրիլ 25  
25 ը նշանակած է իբրեւ Ազգային եւ կրօնական Սուրբ օր, որը մենք կը  
կատարենք 21 ին Հրապանք ունինք նաեւ կատարել Հոգեհանգստեան Պաշտօն  
Հ Ա Ո Միութեան Բարեբարներու խնկելի յիշատակին :

Մատուցիս Տիկնանց Միութեան Ատենապետուհի Տիկին Հռիփսիմէ ազըլեա նի  
եւ տիկին Սաթենիկ Տիկնութիւնի բոլոր Հարաւային Ամերիկայէն այցելութեան  
առթիւ հոս ժամանած իր բոլոր տիկին Սօդիկ Բէօյլեանի իպատիկեւ ճաշկերոյթի  
ատեն մեր Պարտուց Թուղթի հրկիզման համար Տիկին Ազըլեան նուիրեց 50 ՚  
ՏՕլար, իսկ Տիկին Սաթենիկ իր սրտակից բոլոր ողջ եւ առողջ հոս ժամ-  
նելուն առիթով ան եւս նուիրեց 25 Տօլարսոյն նպատակին համար :

ՈՒՐԱԽԱՌԻԹ ԼՈՒՐԵՐ

Ուրախ ենք յայտնելու որ գաղութիս երիտասարդներէն մեր սիրելի Ետուարտ  
Շամադասեան յաջող կերպով եղաւ ՃՕՐԹ ՄԱՆՄՈՒԹ Բօլէճէն, մեր շնորհաւորու  
թիւնները իրեն եւ իր ծնողաց :

Օրիորդ էլիս Թիւ 1 Էնքճեան, գաւազը Տէր Են տիկին Հայկ Թիւ Գէնքճեաններու :

Հարունակութիւն --- ՊԱՐՏՈՒՑ ԹԻՈՒՂԸ ՊԻՏԻ ԱՅՐՈՒԻ ԱՄՍՈՅՍ 21 ԽՆ...  
իբր յա ռաշադէմ իր դատերուն մէջ \* անցած է խիստ յաջող աշակերտներու  
կարգին :

Տեղւոյս սիրուած Ազգայիններէն Պրն Խորէն Գայսէրեան կը մեկնի իր ծննդավայրը Կեմէրի միանալու համար իր սրտահատոր գրոջ 50 55 տարուայ բաբաժնո լմէ յետոյ :

Ուրախ ենք յայտնելու որ Տիկին Մարիցա Թըրնամեան վեց երկար շաբաթներ հիւանդանոց մնալէ յետոյ բաւական կազդուրուած վերադարձած է իր բնակարանը :

Տիկին Աննա Սօլա քեան բաւական վտանգաւոր արկածէ մը զեջծ մնալով այժմ

հանգիստ կընէ :

Մատուռիս ներքին մասը որ կանխաւ որոշուած էր որ ներկուի \* որը աշխատութի  
թեամբ Սարկաւազ Հէթիմեանի եւ օգնութեամբ Պրն Հէրրի ՆԱԿԻՉԻ եւ պրն ԿՐԷՂ  
Քարլ Գալճեանի լրացած ըլլալով այժմ ներկայանալի վիճակի մէջ է \* շուտով պիտի ներկուի նաեւ դռնի կղմիներով պատուած պատերուն մէկ մասը :

ՊԵՏՔ ՈՒՆԻՆՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Մատուռիս խոհանոցին տախտակամածը 11000 ծածկելու համար նիւթական օգնութիւն կը խնդրուի \* անհրաժեշտ է :

Վր այի յարկի երկու սենեակներուն ներկուիլը անհրաժեշտ է, փափաքելի է որ բարեպաշտ Ազգային մը յանձն առնէ անոնց ծախքը :

Հետեւեալ նուէրները նոր հասած են պարտուց թուղթը այրելու համար :

ԱՅՍ ԵՐԵՔ ՆՈՒԻՐՆԵՐԸ Եւս մաս պիտի կազմեն ընդհանուր ցանկին վրայ :

Տիկին Սաթենիկ Տիլիմէթին 25 00 Տօլար

Տիկին ԱԼՊԸՐԸ Սիմոն 10 00 Տօլար

Պրն ԱՐՄԵՆԱԿ Պիւլպիւլեան 5 00 Տօլար

Նոյնպէս կ'իմանանք որ Ռօզ ՍՕԼԱՔԵԱՆ Եւս վտանգաւոր արկածմը անցուցած \* այժմ հանգիստ կընէ :

ՍԲ. գատկուայ եւ սբ. Յարութեան առթիւ \* Խնամակալուելութիւնս Ձեր բոլորին մաղթելով երկար, առողջ եւ երջանիկ կեանք միաձայնութեամբ կըսենք \*

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի \*ՄԵՌԵԼՈՑ

ՕՐՀՆԵԱԼԷ ՅԱՐՈՒԹԻԻՆ ՔՐԻՍՏՈՍԻԿ